Վանո Սիրադեղեանի ելոյթը ՀՀՇ խորհրդում

Յուլիսի 28ին տեղի ունեցաւ ՀՀՇ խորհրդի հերթական նիստը, ուր ելոյթ ունեցաւ նաեւ Վանո Սիրադեղեանը։ Ստորեւ ներկայացնում ենք նրա ելոյթի միայն այն մասը, որը վերաբերում է Դաշնակցութեանը (տեղի սղութեան պատճառով) թէեւ հոետորը պնդել էր «Ազատամարտ»ում այն ամբողջութեամբ տպագրուած տեսնել։ Թող դատի ընթերցողը։

Հիմա, իհարկէ, շփոթմունքի մեջ են բոլորը, մանաւանդ ժողովուրդը, որը «Ղարաբաղ» կոմիտեի հետ մեծ հույսեր էր կապել եւ միամտաբար կարծում էին, թե «Ղարաբաղ» կոմիտեն դեռեւս գոյություն ունի, եւ քաղաքականապես, երեւի պակաս գրագետ ժողովրդի հոգեբանությամբ այնուամենայնիվ ֆետիշացնում է բաներ, որոնք երեւի չի կարելի ֆետիշացնել, բայց գուցե դա մեր ժողովրդի առանձնահատկությունն է. տանջված, դարեր շարունակ հալածված, որ ինչ որ մի բան ֆետիշացնում է, մի դեպքում՝ դաշնակցական կուսակցությունը, դրրսում կամ ներսում, մյուս դեպքում «Ղարաբաղ» կոմիտեն, եւ, փաստորեն, փոխվում է կուսակցությունը կամ կազմակերպությունը Հայրենիքի հետ։ Ես նկատել եմ, որ ստեղծվում են, այնուամենայնիվ, ոչ միայն դաշնակցական կուսակցության այլ նաեւ ժողովրդի քանքերով էլ Հայրենիքի, կորած Հայրենիքի գաղափարը փոխարինվել է կուսակցության գաղափարով, իսկ դա ամենավտանգավոր բանն է, որ տեղի է ունենում սփյուռքում։ Իբր հիմա չկա հայրենիք եւ հայրենիքին փոխարինում է դաշնակցական կուսակցությունը. նույն բանը քիչ է մնում տեղի ունենա Հայաստանում։ Ես վերջապես այս հանգուցալուծումը ժողովրդի քաղաքական սթափության համար համարում եմ կարեւորագույն, բեկումնային պահ։ Գերագույն խորհրդի հանձնաժողովը հաշվետվություն պահանջեց արտաքին տնտեսական կապի նախարարից՝ տառացիորեն ոչ մի գործ չի արվել եւ Հայաստանը ոչ մի գործարք չունի որեւէ երկրի հետ մինչդեռ մենք Ռուսաստանին ժամանակին վախեցնում էինք ալտերնատիվ ճանապարհների մասին խոսելով։ Փաստորեն, ինձ թվում է, սա ոչ միայն անկոմպետենտության հետեւանք է, այլ լուրջ քաղաքական սաբոտաժ։ Որպեսզի դուք վստահ լինեք կասեմ, որ այդ սաբոտաժի հեղինակը դաշնակցական կուսակցությունն է, որը Պարսկաստանի հետ մեր հարաբերությունները արդեն մի տարի է վիժեցնում է։ Վերջին սկանդալը, որը տեղի ունեցավ վարչապետի մի նամակի հետ կապված դաշնակցական Պարսկաստանի լիդերներից մեկին ուղղված նրանք հրապարակեցին։ Պարսկաստանում կառավարական մեծ ճգնաժամ սկսվեց, ճգնաժամ չէր՝ սկանդալ, որովհետեւ այդ կառավարության մեջ ադրբեջանցիներ բավականին կան եւ Պարսկաստանի հետ նկատվող մեր հարաբերությունները եւս շորս-հինգ-վեց ամսով հետ շպրտվեց, մինչեւ տարվա վերջ ոչ մի տնտեսական հարաբերություն չի լինելու Պարսկաստանի հետ եւ քաղաքապետի այցը հետաձգվեց։ Մեր դրսի կուսակցությունները, հատկապես դաշնակցական կուսակցությունը - ի դեպ ես պնդում եմ, որ «Ազատամարտը» տպի իմ այս ելույթը ամբողջությամբ- վիժեցնում են Պարսկաստանի հետ հարաբերությունը-Թուրքիայի հետ պարզ է՝ Հայ Դատի խնդիր կա։ Եթե դուք ծանոթ եք դաշնակցական մամուլին՝ ամբողջ աշխարհով մեկ այնպիսի թշնամական կամպանիա է գնում հայկական պառլամենտի նախագահի դեմ, հայ պետականության դեմ, որ նույնիսկ Բաքվի «Բակինսկի ռաբոչի», «Բակինսկի կոմսոմոլեց», «Վիշկա» թշնամական թերթերը կնախանձեն այդ հայհոյական ոճին։ Ոչ մի չափի զգացում, ոչ մի տակտ, որը կարող էր իրեն թույլ տալ կուսակցությունը կամ մամուլը. բիրտ թշնամական կամպանիա է գնում արդեն վեց-յոթ ամիս, չեմ ասում վերջին երկու տարին։ Մենք երկու տարի համբերում էինք, դիմանում էինք, մտածում էինք, որ կճշտեն իրենց դիրքորոշումը, բայց հիմա գնալով սարսափելի է դառնում. կարեւորն ի՞նչ է՝ ոչ միայն մամուլով, այլեւ գործողություններով կասեցնում են, վիժեցնում են բոլոր տնտեսական կապերը բոլորի հետ՝ հայերի եւ օտարազգիների հետ, որ կարող էր տեղի ունենար Հայաստանի հետ, որի ձեռնարկումները Հայաստանի Հանրապետությունը կամ որեւէ հիմնարկ-ձեռնարկությունը նախաձեռնում է։ Վիժեցնում են։ Ի՞նչ են ուզում։ Իմ ըմբռնումն ասեմ՝ օրինակ, Լեւոնը սխալվում է, երբ ասում է իշխանություն են ուզում այստեղ, նրանք իշխանություն չեն ուզում, նրանք ուզում են իշխանությունը հանձնել կոմունիստներին։

Սա արդեն երկրորդ գործարքն է. դաշնակցականների եւ կոմունիստների առաջին գործարքն այն եղավ, որ հայկական պետականությունը տվեցին Ռուսաստանին եւ դրանով տվեցին Ղարաբաղը եւ դրանով դատարկեցին փաստորեն Նախիջեւանը։ Հիմա սա արդեն երկրորդ գործարքն է՝ Հայաստանը կրկին Ռուսաստանին տալու, եւ դա մեծապես հաջողվում է։ Իրոք իշխանություն չեն ուզում, որովհետեւ դա ռեալ չի եւ կոալիցիոն կառավարության մասին իրենց խոսքերը զուտ խոսքեր են, որպեսզի մեղմանա կոմունիստների ռեժիմի գոյությունը Հայաստանում, ժողովուրդը դա ընդունի։ Ղարգապես այստեղի իշխանությունը երբ կարգվեց ազգային իշխանություն, դրանց «Դաշնակցության» դիրքերը արտասահմանում խիստ թուլացել են եւ Հայաստանում չունենալով ազգային պետություն դարձյալ կուժեղանա Դաշնակցության համարյա համատա-

Շար. էջ 3 →

Վանօ Սիրադեղեանի ելոյթը ՀՀՇ խորհրդում

← Սկիզբը՝ էջ 2

րած իշխանությունը: Եվ ամենավտանգավորը սրա այն է, որ իբր թե Հայաստան կոմունիստների գալով, մանավանդ Դաշնակցության օժանդակությամբ ինչն է վտանգվում՝ վտանգվում է իրոք մեր ապագայի ազգային պետականություն հաստատելը, Հայ Դատի գաղափարը Անդրկովկաս մտցնելը դա կործանարար է Հայաստանի համար եւ առաջիկա 10-20 տարիների ընթացքում Հայաստանը կարող է գոյություն չունենալ: Արտասահմանում Հայ Դատի գաղափարը պահում է սփյուռքահայությանը, Հայրենիքի կարոտը, Հայրենիքը վերադարձնելու գաղափարը սփյուռքահայությանը պահում է, բայց Հայաստան մտցնելը, ինչը երեք տարի է ինչ ուզում են եւ դաշնակները եւ կոմունիստները, Հայ դատի գաղափարը, պահանջատիրությունը, Անդրկովկաս մտցնելը եւ Վրաստանի հանդեպ, եւ Ադրբեջանի հանդեպ, դա կործանելու է Հայաստանը: Եվ նրանք գիտակցաբար թե անգիտակցաբար գնում են այդ ճանապարհով, բայց ամենամեծ վտանգը այս է: Ինչո՞վ է մեծանում Դաշնակցության եւ կոմունիստների ալեանսը: Վտանգը ինչո՞վ է մեծանում՝ մեծանում է նրանով, որ նրանք՝ արդեն կոմունիստները փակ գրություններում, հեռագրերում՝ գաղտնի հեռագրերում արդեն երեք ամիս է, որ Հայաստանի կոմկուսը պատկանում է Հայաստանի վարչապետին եւ ոչ թե Գերագույն Խորհրդին: Արամ Սարգսյանը մի քանի անգամ այս հեռագրերը ուղարկել է պալիտբյուրո: Արամ Սարգսյանը Գետաշենի օրերին հատուկ միսիայով գնացել է Մոսկվա, Հայաստանում ստեղծելու դաշնակցական-կոմունիստական կոալիցիոն կառավարություն՝ անկուսակցական պրեզիդենտի ղեկավարությամբ: Անկուսակցական ես այնպիսին եմ հասկանում, որ դա ՀՀՇից չի եւ պատահական չի, որ Հայոց համազգային շարժումը մերժում է այս 6-7 ամիսների ընթացքում եւ վերջնականապես դուք տեսաք, թե անկուսակցական պրեզիդենտության թեկնածուն Հայաստանում ով է: Թերեւս, այս դահլիճը այն տեղը չէ, բայց ես ասեմ դարի ծրագրի մասին, թերեւս դրանով կանխվի, դա դաշնակցական կուսակցության աղբյուրներից է, ծրագրավորվել էր Նովո-Օգարյովո լեւոնի գնալու դեպքում եւ չգնալու դեպքում դատարկել երկու գյուղ Շահումյանում՝ դա դաշնակցականների եւ կոմունիստների պլանն է, եւ, Մոսկվայի, բնականաբար: Դատարկել երկու գյուղ Շահումյանում, Վազգեն Մանուկյանի Մոսկվա գնալ գալուց հետո դադարեցնել դեպորտացիան Շահումյանում, գոնե կասեցնել, եւ դրանով կարճել այն սահմանը, որը գոյություն ունի Մինիստրների խորհրդի եւ Գերագույն խորհրդի միջեւ կամ երկու անձերի հեղինակությունների միջեւ: Հիմա երկու անձերի այդ հակասությունների վրա փառավորապես աշխատում են, եւ այդ հակասությունը սարքեցին փառավորապես, ոչ թե օգտվում են դրանից. որպեսզի ենթադրություններ չլինեն միայն, եւ վարկածներ չլինեն, ես կասեմ, որ 1972 թվականին գուցե աշնան մի օր, գուցե ամռան, սա ճշտված չի, գուցե երբեք էլ չճշտվի, Հայաստանի Պետական Անվտանգության կոմիտեի, դուք եթե հիշում եք Բրեժնեւի հետ Նիկսոնի պայմանագիրը կնքելու տարին էր, այս թվականին Հայաստանի Պետական Անվտանգության կոմիտեի ներկայացուցիչը Մոսկվայի պետական անվտանգության առաջին բաժնի գնդապետին է ներկայացնում դաշնակցական բյուրոյի ներկայիս անդամ Հրաչ Տասնապետյանին եւ այդ օրվանից դաշնակցությունը կամ նրանց ծառայությունը աշխատում է միայն Մոսկվայի Պետական անվտանգության կոմիտեի հետ: Ես ձեզ ասեմ, որ սփյուռքում ոչ մեկը չի կասկածում, որ դաշնակցությունը կապեր է... ծառայում է նաեւ Ամերիկայի ՑԵ ՌԵ ՈՒԻ-ին, բայց քանի որ ՑԵ ՌԵ ՈՒԻ եւ ԿԳԲ-ն միասին են աշխատում, այստեղից փոխվել է գործողության ձեւը եւ դրա օրինակներից մեկը, ինչպես գիտեք այդ «Ազատություն» կոչվող ռադիոկայանի եւ Էդիկ Հովհաննիսյանի ելույթների ձեւն է, նրանց վայրահաչությունը: Մի ժամանակ Ամերիկան ուզում էր Սովետական Միությանը պախարակել, պախարակում էր Էդիկ Հովհաննիսյանը, հիմա ուզում է պահպանել Սովետական Միությունը եւ պախարակել Հայաստանը, պախարակում է Հայաստանը: Էն էլ ասեմ, որ դաշնակցության ղեկավարությունը որոշ անվստահություն է տածում այստեղի իրենց ֆրակցիայի մեկ-երկու անդամի հանդեպ, մտածելով, որ նրանք պետական անվտանգության ծառայության գործակալներ են: Նրանք նեղանում են ոչ թե որ Մոսկվայի, ռուսական ծառայության գործակալներ են այլեւ Հայաստանի պետական ծառայության, այսինքն, հավանաբար, իրենց համար անընդունելի: Ինչու ասացի այսքանը, որ իրոք պարզ դառնա այն վտանգը, որ սպասում է առաջիկա երեք ամսում Հայաստանի ներքին կյանքում: Ես նախորդ նիստում ասացի, որ կարող է Հայաստանում քաղաքական սպանություններ տեղի ունենա, ես դա հիմա կարծում եմ այնուամենայնիվ էդ ճանապարհը ձեռնտու չի, որովհետեւ դա արդյունավետ չի լինի, բայց կգնա «Ազգային փրկության կոմիտեի» տարբերակը, իսկ Հայաստանում դա շատ հեշտ է, մենք ունենք Շահումյան, ունենք Ղարաբաղ: Բանակը կխփի Շահումյանին, կխփի Ղարաբաղին, կխփի մեր սահմաններին, մեր սահմաններում կակտիվանան հայ աշխարհազորայինները, կխփի եւս մի քիչ էլ մեր սահմաններին, Երեւանում, Հայաստանում կսկսվի լուրջ քաոս, լուրջ կամ կիսալուրջ եւ պառլամենտը չի կարողանա հավանաբար տիրապետել իրադրությանը: